ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/138

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16534-18 գրությամբ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի 10.09.2018թ. թիվ 061/8343 և 11.09.2018թ. թիվ 061/8418 գրությունների հիման վրա, 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16534-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 30.08.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 06.09.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.08.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (23 000 ՀՀ դրամ):

Այնուհետև, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավար՝ Մամիկոն Ասլանյանի կողմից համապատասխան փաստաթղթերը ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն, իսկ ուղեկցական գրությամբ նշել, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.08.2018թ.) ունի հարկային պարտավորություններ, այդ իսկ պատճառով մասնակցի հայտը մերժվել է:

Արդյունքում՝ ս.թ. օգոստոսի 13-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի վարույթում նախաձեռնվել է «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/138 ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն 30.08.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 23 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի մոտ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.08.2018թ.) առկա 23 000 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորությունը «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված

վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով է:

Ընկերությունը գտնում է, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում չի խախտել ստանձնած պարտավորություն հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերասհկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն, երբ Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում բացահայտվել է, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերսհկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից), պարզվել է (ՀՀ ԿԱ ՊԵԿ թեժ գծին կատարած զանգից), որ ս.թ. հուլիսին վերսհկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում կատարվել են փոփոխություններ, և որպես վերահսկվող եկամուտների գծով

առանձին պարտավորություն է դիտարկվել նաև դրոշմանիշների վճարը՝ առանձին տողի ձևով: Պետք է նշել, որ վկայակոչված հրամանը հասանելի չէ, այն հրապարակված չէ, և «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն չէր կարող տեղյակ լինել, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը այսուհետ դիտարվել է որպես վերսհկվող եկամուտների գծով առանձին պարտավորություն, և Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնելով և հավաստելով, որ բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, նման պայմաններում, մեր կարծիքով, չի խախտել գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն են հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն 30.08.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերսհկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.08.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ընկերությունը նշել է նաև, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին թյուրիմացության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները դիտարկվել են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց

հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին: Միևնույն ժամանակ ՀՀ հարկային օրենսգիրքը անդրադառնալով հարկերի և տուրքերի համակարգին, օրենսգրքի 7-րդ հոդվածում սպառիչ թվարկել է ՀՀ-ում կիրառվող վճարների բոլոր տեսակները, որոնց շարքում բացակայում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը, և վերոհիշյալ տրամաբանությամբ, ըստ Ընկերության, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշների վճարը չպետք է դիտարկվեր հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Բացի այդ, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը վճարվում է Հիմնադրամ, մինչդեռ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները պետք է վճարվեն ՀՀ պետական կամ համայնքների բյուջեներ:

Այս դիրքորոշմանն է մեծապես նպաստել նաև այն հանգամանքը, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում որպես հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խոհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի

գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նաև նկատի ունենալ, որ թե www.gnumner.am համացանցային կայքում և թե ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող փաստաթղթերում առկա չէ որևէ արձանագրություն, որտեղ արձանագրված կլինի, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.08.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի պարտավորություններ, այսինքն ստացվում է մի իրավիճակ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ոչ միայն չի արձանագրվել վերոնշված փաստը, այլ նաև որպես հետևանք՝ չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նման մոտեցում է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանը իր կողմից 08.08.2018թ. կայացրած ՍՑ-ԷՍ-2018/107 որոշմամբ: Նշված որոշմամբ արձանագրվել է, որ տվյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը www.gnumner.am կայքում նույնպես ընդհանրապես չի հրապարակել գնահատման նիստի արձանագրությունը, և Է. Սարգսյանը տվյալ փաստական հանգամանքներում գտել է, որ «Միաժամանակ նկատի ունենալով, որ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում մասնակցի տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների գնահատման նիստին հաջորդող աշխատանքային օրը և հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու արդյունքում Ընթացակարգը 12-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած, այսինքն, Հանձնաժողովի կողմից չի

տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված՝ մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունն, ըստ էության զրկվել է Կարգի 45-րդ կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ներկայացվել ինչպես Ընկերության կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ»:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է, ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/138 ընթացակարգի շրջանակներում 17.09.2018թ. ժամը 10:45-ին և 19.09.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 19.09.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Վանաձորի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.09.2018թ. թիվ 061/8343 և 11.09.2018թ. թիվ 061/8418 գրություններով հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

(30.08.2018թ.) ունի հարկային պարտավորություններ, այդ իսկ պատճառով Ընկերության հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/138 ընթացակարգի շրջանակներում 17.09.2018թ. ժամը 10:45-ին և 19.09.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/138 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքում տեղադրված նստարանների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 30.08.2018թ. հայտ է ներկայացրել «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.08.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 23 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16534-18 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 10.09.2018թ. թիվ 061/8343 և 11.09.2018թ. թիվ 061/8418 գրությունները և կից փաստաթղթերը, «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքում տեղադրված նստարանների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 30.08.2018թ. հայտ է ներկայացրել «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 1 000 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.08.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 03.09.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 23 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 30.08.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 23 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ***30.08.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:***

Դրա հետ մեկտեղ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.09.2018թ. տրված թիվ 1530 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 30.08.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է դրոշմանիշային վճարի գծով 23 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների

կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով 30.08.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի նշված հանգամանքը հաշվի առնելով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-18/83» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16534-18 գրությամբ «ԱՍՏՄԱՐՇԻՆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06943192) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ